ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /արգելափակող լույսերի և լուսադիոդային լամպերի ձեռքբերման/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 01.03.2018թ. ժամը 15.00-ին:

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Մ. Դավթյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Ա. Պողոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/ Ա. Մովսիսյանը
Ա. Համբարձումյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/ Մ. Նիկոյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 23.02.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Ռեալ Բուսինեսս, ԳԱԼՏ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերությունների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից armeps համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ եզրակացություն չի ստացվել:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ Ռեալ Բուսինեսս, ԳԱԼՏ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերությունների կողմից էլեկտրոնային փոստով ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Համաձայն Կարգի 44-րդ կետի դրույթների՝ մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի /ամբողջական նկարագրերի/ համապատասխանությունը գնահատել բավարար, հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.3 Ընտրված մասնակիցներ ճանաչել.
1 չափաբաժնով՝ Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ն,
2 չափաբաժնով՝ ԳԱԼՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.4 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.5 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ ______________ Ս. Դավթյան

անդամներ՝ ______________ Վ. Ավետիսյան

______________ Ա. Պողոսյան

______________ Ա. Մովսիսյան

______________ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ ______________ Մ. Նիկոլյան